ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021թ. հոկտեմբերի 12-15-ը Ռուսաստանի Դաշնություն կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Ժաննա Զաքարյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ էկոնոմիկայի նախարարության որակի ենթակառուցվածքների զարգացման վարչության պետ

3.Գործուղման վայրը և ժամկետները՝

Ռուսաստանի Դաշնություն, ք. Սանկտ Պետերբուրգ, 2021թ. հոկտեմբերի 12-15-ը

4. Հրավիրող կողմը՝

ՌԴ արդյունաբերության և առևտրի նախարարության Տեխնիկական կանոնակարգման և չափագիտության դաշնային գործակալություն (Росстандарт)

5. Գործուղման նպատակը՝

Մասնակցություն 2021թ. հոկտեմբերի 13-15-ը ք. Սանկտ Պետերբուրգում կազմակերպված «Ստանդարտացման ռուսական շաբաթ» միջազգային տեխնոլոգիական համաժողովին

6. Քննարկված թեմաները՝

Քննարկված թեմաներն են՝ տեխնիկական կանոնակարգման ոլորտի զարգացման նոր մարտահրավերները, միջազգային, տարածաշրջանային և ազգային ստանդարտացման զարգացման նոր միտումները, համապատասխանության գնահատման ոլորտի մաս կազմող կամավոր սերտիֆիկացման հարցերը, շինարարության բնագավառում նոր իրավական կարգավորումները:

ԵԱՏՄ մինչև 2025 թվականի ռազմավարական զարգացման հիմնական ուղղություններին համապատասխան՝ տեխնիկական կանոնակարգման արդի խնդիրները, տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքի՝ կեղծ ապրանքաշրջանառությունից պաշտպանությունը, «խելացի քաղաքների» զարգացմանն ուղղված ստանդարտացման աշխատանքների կոորդինացումը, «հալալ» սերտիֆիկացման գործընթացում համապատասխանության գնահատման ոլորտում կամավոր սերտիֆիկացման հարցերը:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգին (նախագիծը մշակվում է վարչության կողմից) առնչվող հարցերը և դրույթները:

Համաժողովի շրջանակներում տեղի են ունեցել ելույթներ և քննարկումներ վերոնշյալ խնդիրների ներկայացմամբ Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի տեխնիկական կանոնակարգման և ստանդարտացման ոլորտների ղեկավարների, Ռուսաստանի Դաշնության ստանդարտացման, սերտիֆիկացման ոլորտների մի քանի ինստիտուտների, գիտական կազմակերպությունների ղեկավարների, միջազգային ստանդարտացման կազմակերպության (ԻՍՈ) ներկայացուցիչների, Գերմանական տնտեսության արևելյան կոմիտեի գլխավոր տնօրենի, Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում ՌԴ առևտրական ներկայացուցչի, «SIEMENS AG» տեխնիկական կանոնակարգման և ստանդարտացման գծով տնօրենի, Գերմանիայի էկոնոմիկայի էներգետիկայի նախարարության ներկայացուցչի կողմից:

Առավել մանրամասն քննարկումներ են տեղի ունեցել ԵԱՏՄ մինչև 2025 թվականի ռազմավարական զարգացման հիմնական ուղղություններին առնչվող՝ տեխնիկական կանոնակարգման արդի խնդիրների, տեխնիկական կանոնակարգման օբյեկտ հանդիսացող արտադրանքի՝ կեղծ ապրանքաշրջանառությունից պաշտպանությանը, «խելացի քաղաքների» զարգացմանն ուղղված ստանդարտացման աշխատանքների կոորդինացման, «հալալ» սերտիֆիկացման գործընթացում համապատասխանության գնահատման ոլորտում կամավոր սերտիֆիկացման վերաբերյալ հարցերով:

Հանդիպում է տեղի ունեցել Մենդելեևի անվան Չափագիտության Համառուսաստանյան գիտա-հետազոտական ինստիտուտի ղեկավարության հետ, որի շրջանակներում ներկայացվել են այդ ինստիտուտի գործունեության մեծ հնարավորությունները և բանակցությունների արդյունքում պայմանավորվածություն ձեռք բերվեց հետագա եռակողմ համատեղ համագործակցության վերաբերյալ նախարարության Որակի ենթակառուցվածքների զարգացման վարչության, Ստանդարտացման և չափագիտության ազգային ինստիտուտի և Մենդելեևի անվան համառուսաստանյան գիտա-հետազոտական ինստիտուտի միջև:

Գործուղման ընթացքում ստացված տեղեկատվությունը և ձեռքբերված լրացուցիչ գիտելիքներն եռօրյա ժամկետում կներկայացվեն նախարարության ղեկավար կազմին և աշխատակիցներին՝ դրանց հետագա ընթացքը սահմանված ժամկետում ապահովելու համար:

8. Ստորագրությունը, ամսաթիվը՝

18.10.2021թ.